

մեր սիրելի Հայաստանն դուրս՝ օտար երկիրներ ցիրուցան լինելէն յետոյ՝ բարբարոսաց յարձակմունքներէն ու բռնութիւններէն ազատելով, ալ հոգ ըրած չէ իր ազգութիւնը պահել:

«... Մեր ազգին աղէտից պատճառը ազգային դպրոցաց պակասութիւնն է. տարակոյս չկայ որ մեր ազգը, ազգային դպրոցներով միայն անցեալէն աւելի փառաւոր, անցեալէն աւելի երջանիկ ապագայ պիտի պատրաստէ իրեն: Բայց ո՞ւր են ազգային դպրոցները, ո՞ւր է ազգային դաստիարակութիւնը: Մեր ազգին որդոց շատերը, դժբախտաբար, աշխարհիս ամէն կողմ օտար ու խորթ դաստիարակութիւն մի կ'ընդունին եւ անով պզտիկուց կը սովորին օտարները մեր ազգէն շատ աւելի սիրելի ու պատուելի եւ իրենց կենաց մէջ շատ անգամ կ'ամբնան կը կարմրին հայ անունը կրելու»:

Սրտաճմլիկ փաստաթուղթ մըն է աս, որ մեզ կը պատմէ թէ տակաւին կէս դար առաջ ի՞նչպէս կ'ողբերուէին մարդիկ յանուն հայ ցեղին, ու անոր լեզուին ու մշակոյթին: Տոնիկ ազա Սիմէոնեանի օրով էր սակայն ատիկա: Այս պատկառելի մարդը որ մինչեւ Ծերակոյտ հասաւ՝ տեսակ մը նախախնամութիւն էր Ռոմանի մէջ ասկէ կէս դար առաջ: Ան էր որ հայ շունչը տաք կը պահէր, ու հայ դպրոցին վրայ կը հսկէր դորովայի մօր մը պէս:

Չեւրս անցաւ Խորէն Նարպէյի մէկ նամակը 1881 Փետր. 27 թուականով, ուղղուած Տօնիկ ազային: Ան ցոյց կուտայ թէ երբեմն ի՞նչ մտահոգութիւններ ունեցած են մեր նախնիքները այս արեւուն վրայ որպէսզի կուէ չերթան:

Խորէն Նարպէյ կը գրէ.

«Ձեր գիրին մէջ ներողութիւն կը խնդրէք թէ որ էք մը սխալութիւններ դանաք զիմ հայրի գրին մէջ» ըսելով, ու կ'աւելցնէք. «Գիտնաք որ տղայ հայերը ոչ ատիւրտաբը չը պիտ որ գիտնան»:

«Երանի թէ տղայ հայերը ձեր գիտցածին ու գրածին մէկ քառորդը գիտնային ու գրել կարենային: Իմ ցաւս մեծ է քանի որ կը մտածեմ որ Ռոմանիոյ հայ երիտասարդութիւնը չսովորելով իր ազգային լեզուն պիտի գայ օր մը որ ազգութիւններն ալ կամաց կամաց մոռ-

նան ու կորսնցնեն: Այս մասին ամէն քաղքի մէջ խօսեցայ, քարոզեցի, աղաչեցի ու յորդորեցի, որպէսզի Պուքէշէի մէջ բարձրագոյն դպրոց մը բանան որ աշակերտները ամէն ուսումներու ու պէտք եղած լեզուներու հետ սորվին ազգային լեզու ու պատմութիւն: Հոն ազգատի տղայք կրթուին որպէսզի ըլլան վերջը վարժապետ եւ քահանայ Ռոմանիոյ քաղաքներուն մէջ: Ձեր սիրելիութիւնը լաւ հասկըցած է այս բանին հարկաւորութիւնը, ուստի եւ կը խնդրեմ որ ի սէր Աստուծոյ այս աշխատութիւնը յանձն առնէք, եւ յորդորէք Պուքէշէի եւ ուրիշ քաղաքի հարուստները որ իրենց խոստմունք կատարեն»:

Գժբախտ եղած է նաեւ Ռոմանը:

Այդ բոլորը չեն դորած թումբը կանգնելու հեղեղին առջեւ:

Կէս դար ալ չէ տեսած ողբերգութեան այդ ջերմ ալիքը:

Պօթօջանցի Գարբիէլ վարժապետի օրով է որ Ռոմանի դպրոցը ապրած է փայլուն շրջան մը: Երեսունհինգ տարի պաշտօնավարած է ան, ու հասցուցած շատ մը աշակերտներ: Իր օրով օտարներ ալ եկած են հայ դպրոցը:

Ռոմանի վերջին հայ ուսուցիչը կ'ըլլայ վանեցի Մանուէլ Միրախորեանը, որ իր աշբերով ալ կը տեսնէ շիջումը այդքան տենդով սկսուած կրթական աղուոր շարժումի մը, ու կ'անցնի Ֆօքչան:

ՖՕՔՇԱՆԻ ՄԷՁ

Ֆօքչան համեմատաբար աւելի նոր դպրութ է՝ բարդատմամբ Մոլտավիոյ ուրիշ հայաշատ քաղաքներուն: Ու նոյն համեմատութեամբ ալ կարծես աւելի ուշ կը սկսի հոն դարթումը: Այնպէս որ հազիւ անցեալ դարու կէսերուն ան իր դպրոցը կ'ունենայ:

Երկու վարժարան ունէին հայերը Ֆօքչանի մէջ, մանչոց եւ աղջկանց: Առաջինը, Ս. Ղեւոնդեան, աւելի հին է քան Հոսիփիմեանց աղջկանց վարժարանը, որ հիմնուած է 1860-ին: 1886-ին երկուքն ալ իրենց գեղեցիկ շէնքերը ունեցան: Գր. Կօյլավ կ'ըսէ թէ քննութիւնները տեղի կ'ունենային ուսմէն կրթական նախարարութեան կողմէ կարգուած յանձնատրուի մը, իսկ հայ լեզուի, կրօնի եւ Փրանսե-